

# Կ. ՊՈԼՍԻ 381 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ 1600-ԱՄՅԱԿԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՄԲՈՒԼԻ ՀԱՅՈՑ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սույն թվականի փետրվարի 28-ին, «Կոստանդնուպոլսոյ Սուրբ ժողովոյն՝ հարիւր յիսուն Հայրապետաց» (381 թ.) տոնին, շաբաթ օրը, Ստամբուլի հայոց Ս. Երրորդություն Մայր եկեղեցում, Թուրքիայի հայոց ամենապատիվ Տ. Շնորհք սրբազան պատրիարք հոր նախաձեռնությամբ և նախագահությամբ, կատարվել է Ընդհանրական Եկեղեցու երկրորդ Տիեզերական ժողովի գումարման 1600-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսություն:

Այս առթիվ Մայր Աթոռ է ուղարկվել Թուրքիայի հայոց Պատրիարքարանի դիվանի պաշտոնական հաղորդագրությունը, որից քաղվածաբար «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում տեղեկություններ՝ իրենց կարևորության և շահեկանության համար:

Կ. Պոլսի հայոց սրբազան պատրիարքը, նաև որպես նույն քաղաքի արքեպիսկոպոս, հոբելյանական հանդիսության կազմակերպման առիթով հանրությանն է դիմել հետևյալ բացատրական մի կոչով.

«Քրիստոնեական Եկեղեցին իր ներքին վեճերը և դժվարալույծ խնդիրները աշխատած է հարթել հավաքական ժողովներով: Ասոր առաջին օրինակը տրված է Քրիստոսի Առաքյալներու կողմե (Գործք Առաքելոց, ԺԵ գլուխ):

Առաքելական դարեն հետո ալ Եկեղեցին շարունակած է այս սովորությունը և պատմության ընթացքին գումարված են բազմաթիվ ՏԵՂԱԿԱՆ և ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ նման ժողովներ: Այս վերջինները—ընդհանրականները—ծանոթ են եկեղեցական պատմության մեջ իբրև ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ, և անոնցմե յուրաքանչյուրը կկոչվի անունովը այն քաղաքին, որուն մեջ գումարված է:

Հայաստանյայց Եկեղեցին ասոնցմե առաջին երեքը միայն կընդունի իբրև ՏԻԵԶԵՐԱԿԱՆ: Ասոնց երկրորդը գումարված է այստեղ, Իսթանպուլի մեջ, որ այն ատեն, և անկե հետո երկար դարերով, ծանոթ էր ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ անունով, և հետևաբար պատմության մեջ այս ժողովին հատուկ անունն է «Կոստանդնուպոլսո Առաջին Տիեզերական ժողով», որ գումարված է 381 թվականին, և հետևաբար այս տարի անոր գումարման 1600-ամյակն է:

...Հայաստանյայց Եկեղեցին մասնավոր տոներ հատկացուցած է իր ընդունած երեք Տիեզերական ժողովներեն յուրաքանչյուրին: «Կոստանդնուպոլսո Ս. Ժողովոյն» տոնը անխափան կկատարվի մեր մեջ Բուն Բարեկենդանի նախորդ ՇԱԲԱԹ օրը: Այս տարի այս տոնախմբությունը կհանդիպի փետրվար 28-ի ՇԱԲԱԹ օրը:

Մենք, հատենի Կրոնական Ժողովին որոշում առած ենք այս տոնը կատարել սովորականեն տարբեր հանդիսավորությամբ այս տարի: Անշուշտ պատշաճ էր, որ կատարեինք զայն մեր Մայր Եկեղեցիի մեջ. սակայն նկատի ունենալով, որ նույն շաբթվան ընթացքին Սրբոց Վանդանանց Քահանայից տոնը կկատարենք Մայր Եկեղեցի, մասնակցությամբ մեր ամբողջ հոգևորական դասին, և ներկայությամբ հոգնախուռն հավատացյալներու, որոնք կփութան այնտեղ բոլոր թաղերեն, և նկատի ունենալով որ նույն շաբթվան մեջ Սրբոց Վարդանանց տոնն ալ երկիցս—Եշ. և կիրակի օրեր—կկատարենք Ֆերիգյուղի հայաշատ թաղի համանուն եկեղեցիին մեջ, ուստի որոշեցինք որ «Կոստանդնուպոլսո Ս. Ժողովույն 150 Հայրապետաց» հիշատակն ալ կատարենք Պեյօղլուի կեդրոն թաղի Ս. Երրորդություն եկեղեցիին մեջ, հառաջիկա ՇԱԲԱԹ օրը, փետրվար 28-ին:

Մենք անձամբ հանդերձյալ ենք մատուցանել օրվան ս. պատարագը: Հրավիրված են նաև քաղաքիս քույր Եկեղեցիներու ներկայացուցիչները տոնակից ըլլալու մեզի հետ:

Այսու պաշտոնապես կհրավիրվին նաև մեր եկեղեցական դասի բոլոր անդամները, ներառյալ ավագ սարկավագները, միասնաբար կատարելու այս կարևոր դարադարձը:

Կհրավիրվին նաև մեր համայնքային մարմիններու ներկայացուցիչները և համայն մեր հավատացյալ ժողովուրդը միացյալ ցնծությամբ տոնախմբելու 1600-ամյակի այս տարեդարձը Հայց. Եկեղեցիի ընդունված երկրորդ Տիեզերական ժողովին, որ Նիկիո Առաջին Տիեզերական ժողովի (325-ին) կազմած նախնական Հավատո Հանգանակը ավելի ընդլայնեց և տվավ անոր վերջնական ձևը: Կոստանդնուպոլսո Ս. Ժողովեն ելած այս վերջնական Հավատո Հանգանակը նույնությամբ ընդունված է մեր Եկեղեցիին մեջ, և կարտասանվի ամեն ս. պատարագի ընթացքին իբրև հիմքը քրիստոնեական հավատքի:

...Ուրեմն, Կոստանդնուպոլսո Ս. Ժողովը, քրիստոնեական Եկեղեցիի պաշտոնական հավատքի դավանությունը հորինող երկրորդ ժողովն է, և միանգամայն Ս. Հոգիի աստվածությունը հաստատող տիեզերական հեղինակությունն է: Ուստի, արժան և իրավ է, որ երախտիքով և խոր հարգանքով հիշատակենք այս Սուրբ Ժողովին 150 Սրբազան Հայրապետները, որոնց առաջին նախագահը ծագումով հայ մալաթիացի Մելիտոս ծերունազարդ Անտիոքի Պատրիարքը եղած է:

«Ցիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

— Եղիցի, եղիցի. ի պայծառություն և ի միասնականություն համայն քրիստոնեական Եկեղեցիի և ի փառս ամենակալ Աստուծոյ»:

Փետրվարի 28-ին, շաբաթ օրը, ժամը 8.30-ին, Բեյօղլուի հայոց Ս. Երրորդություն Մայր եկեղեցում պաշտվում է առավոտյան ժամերգությունը՝ հանդիսադրությամբ ամենապատիվ Տ. Շնորհք սրբազան պատրիարքի, մասնակցությամբ ողջ եկեղեցական դասի և ի ներկայության «հավատացյալներու հոծ բազմության մը, հակառակ ձյունախառն անձրևին և աշխատանքի օր ըլլալուն»:

Հայոց ամենապատիվ սրբազան հոր հրավերով հոբելյանական հանդիսությանը ներկա են եղել Ստամբուլի քույր Եկեղեցիների հոգևոր պետեր, բարձրաստիճան բազմաթիվ ներկայացուցիչներ, հայ եկեղեցիների, Գալֆայան ուխտի, համայնքային հաստատությունների անդամներ:

Ժամը 10.30-ին սկսվում է ս. պատարագը: Պատարագիչն է Տ. Շնորհք սրբազան պատրիարքը, որը նախքան «Հաւատամք»-ը խոսում է օրվա հանդիսության նշանակությանը նվիրված բովանդակալից քարոզ՝ հետևյալ բնաբանով. «Եթե քո բերանով Հիսուսին Տեր խոստովանես և քո սրտում հավատաս, թե Աստված Նրան հարություն տվեց մեռելներից, կփրկվես. քանի որ արդարացման համար սրտով եք հավատում, իսկ փրկության համար բերանով խոստովանում» (Հռովմ. Ժ 9—10):

Սրբազան պատրիարք հայրը իր քարոզում նախ շեշտում է «հավատքի կարևորությունը քրիստոնեական կյանքի ու կրոնքի մեջ: Առանց հաստատ և ուղիղ հավատքի կարելի չէ երևակայել ճշմարիտ, առաքինի և աստվածահաճո քրիստոնեական կյանք: Հավատք, ոչ թե միայն «սրտով հավատալու», ըստ Պողոս առաքյալի բացատրության, այլ նաև «բերանով խոստովանելու համար»: Ուրեմն, բերանով խոստովանելը կարևոր է, որքան սրտով հավատալը: Այս մտածումով քրիստոնեական Եկեղեցին կազմել է «Հաւատոյ Հանգանակ»-ներ և կանոնադրել, որ բոլոր նրանք, ովքեր քրիստոնյա լինելու են կանչվել, սրտով ընդունեն ու խոստովանեն, և մանավանդ հայտարարեն այդ իրենց բերնով:

Սակայն, նշել է սրբազան պատրիարք

հայրը, որ Եկեղեցու պատմության ընթացքում ծագել են հավատքի, բարոյականի և վարչության մասին նոր խնդիրներ պատրիարքական Աթոռների և թեմերի միջև, հատկապես Քրիստոսի աստվածության և բնության վերաբերյալ հարցերը, որոնց լուծման համար գումարվել են Տեղական և ապա Տիեզերական ժողովներ: 325-ին Մեծն Կոնստանդիանոս կայսրի հրավերով գումարվել է Նիկիայում (Կ. Պոլսի արվարձան) Տիեզերական Առաջին ժողովը, որին մասնակցել են 318 Հայրապետներ, որոնք դատապարտելով Ալեքսանդրիայի Եկեղեցու Արիոս քահանայի մոլորությունը, հաստատել են Քրիստոսի աստվածությունը՝ «Աստուած՝ յԱստուծոյ, Լոյս ի Լուսոյ, Աստուած ճշմարիտ, Ծնունդ և ոչ արարած», նաև Նրա Հոր Աստուծո հետ համագո և բնութակից լինելը, «նոյն Ինքն ի բնութենէ Հօր»:

Նիկիայի Առաջին Տիեզերական ժողովում հաստատվում է նաև «Հաւատոյ Հանգանակ»-ը կամ «Հաւատամք»-ը: Սակայն, Արիոսի մոլորությունը պաշտոնական դատապարտությունից հետո էլ շարունակվում է հանդես գալ տարբեր անուններով և ձևերով և խռովում՝ Եկեղեցու ներքին խաղաղությունը:

381 թվականին Մեծն Թեոդոս կայսրի հրավերով և նախաձեռնությամբ գումարվում է Կ. Պոլսում Երկրորդ Տիեզերական ժողովը՝ մասնակցությամբ 150 Հայրապետների, որոնք կրկին անգամ հաստատում են Նիկիայի ժողովի «Հաւատոյ Հանգանակ»-ը և դատապարտում՝ Կ. Պոլսի Մակեդոն հայր սրատրիարքի մոլորությունը, որը ուրանում էր Սուրբ Հոգու աստվածությունը:

Կ. Պոլսի Տիեզերական սույն ժողովն է, որ «վերջնական կնիքը դրավ քրիստոնեական հավատքի վրա, զոր կընդունին պատմական բոլոր Եկեղեցիները՝ հույն, հռոմեական, հայ, ասորի, ղպտի, եթովպիացի և այլ Եկեղեցիները, մինչև իսկ արդի ժամանակներու ծնունդ՝ բողոքական Եկեղեցիներու մեծագույն մասը, իբրև հիմք իրենց պաշտոնական հավատքին, քանի որ հիմնված է Նոր Կտակարանի տվյալներուն և սկզբունքներուն վրա», հաստատում է Կ. Պոլսի հայոց Պատրիարքարանի պաշտոնական հաղորդագրությունը:

Իր քարոզի մեջ այնուհետև սրբազան սպատրիարք հայրը շեշտում է.

«Կ. Պոլսո ժողովեն բխած այս հավատամքը կրնանք նկատել հիմքը մեր ներկա քրիստոնեական միության: Այս իսկ պատճառով կարևոր ու այժմեական է այս հավատքը: Տարբերություններ եթե կան ներկայիս քրիստոնեական Եկեղեցիի զանազան ճյուղերու հավատամքներուն մեջ, ետքեն առաջ եկած են, և համեմատաբար Նիկիո և Կ. Պոլսո միացյալ հավատամքին՝ մանր և ըստ մեզի աննշան կետեր են: Ուրեմն ամուր մնանք այս Տիեզերական ժողովի հաստատած հավատամքի վրա, իբրև մեր միության խարիսխը և հավիտենական հիմքը: Այս ժողովի գումարման և այս հավատամքի հորինման 1600-ամյակն է այս տարի, և որուն տարեկան տոնակատարության բացումը կկատարենք այսօրվան պաշտամունքով:

Գոհություն Աստուծո որ 1600 տարիներե ի վեր համայն քրիստոնեությունը, ըլլա Արևելքի և ըլլա Արևմուտքի մեջ, պաշտոնական կամ անպաշտոն ձևի տակ, դեռ «կը-խոստովանի» այս հավատքը և կպահե զայն: Այս իրականության խորհրդանշական արտահայտությունը կրնանք նկատել այսօրվան այս պաշտամունքը, ուր ի մի հավաքված են Իսթանպուլի քրիստոնյա Եկեղեցիներու և համայնքներու գրեթե բոլոր ներկայացուցիչները, որոնք ընդառաջելով մեր հրավերին՝ այս պահուս աղոթակից և տոնակից կըլլան մեզի հետ և ապացույցը կուտան թե քրիստոնեական միության հիմքերը կան ու կմնան ամուր այսօր ավելի քան երբեք»:

Իր քարոզի ավարտին Տ. Ծնորհք սրբազան սպատրիարք հայրը «քույր Եկեղեցիներու բոլոր ներկայացուցիչներուն հայտնեց իր սերն ու շնորհակալիքը, իր խոսքը եզրակացնելով».

«Գոհություն Աստուծո, սիրո միությունը և հաղորդությունը արդեն իսկ ստեղծված է քրիստոնեական Եկեղեցիներու միջև: Մեր աղոթքն է, որ առաջնորդությամբ Ս. Հոգիին, իրականանա նաև մեր Փրկչի Մարմնո և Արյան խորհուրդի հաղորդությամբ կատարվելիք միությունը, որուն համար աղոթեց մեր Տերը իր երկրավոր կյանքի վերջին գիշերը ըսելով. «Որպեսզի ամենքն ալ մեկ ըլլան, ինչպես, ով Հայր, դուն իմ մեջ և ես քու մեջ, որպեսզի անոնք ալ մեր մեջը մեկ ըլլան, և որպեսզի աշխարհ հավատա թե դուն ղրկեցիր Զիս» (Հովհ. ԺԷ 21): Այս հեռանկարը միշտ մեր մտքի աչքերուն առջև բռնելով շարունակեք «բերանով խոստովանիլ» թե մեր հավիտենական Տերն է Հիսուս Քրիստոս և «սրտով հավատալ» թե Աստված հարություն տվավ Անոր մեռյալներեն: «Բերանով խոստովանիլ» կենթադրե ունենալ հավատքի հանգանակ և արտասանել զայն բանիվ բերանո, անշուշտ միաժամանակ հավատալով սրտանց անոր պարունակած ճշմարտությանց: Կոստանդնու-

պոլսո Տիեզերական ժողովը այդ գործն է որ իր լրումին բերած է վերջնական ձև տալով և քրիստոնեական Եկեղեցիին կտակելով Նիկիո ժողովին մեջ սկսված և իրագործված քրիստոնեական հավատքը բանաձևի վերածելու սրբազան աշխատանքը, որպեսզի մենք «բանիւ բերանոյ խոստովանելով» և «սրտի մեջ հավատալով» արդարանանք և հավիտենական փրկության արժանանանք»:

Այնուհետև Տ. Շահան եպիսկոպոս Սվաճյանն ընթերցում է սրբազան պատրիարք հոր քարոզի համառոտագրությունը թուրքերեն լեզվով:

Ճաշու Ավետարանի ընթերցման ավարտին սրբազան պատրիարք հայրը «Հավատքի կազմության 1600-ամյակի տոնակատարության առիթով» հրավիրում է բոլոր ներկաներին և հավատացյալներին միասնաբար արտասանելու այն, ինչ որ տեղի է ունենում սրտագին մթնոլորտում:

Ապա «Ողջույն»-ի պահին, բույր Եկեղեցիների ներկայացուցիչները «Սուրբ սկիհեն ստացված ողջույնը առնելեն հետո, միասնաբար ողջագուրվեցան և փոխանցեցին զայն հավատացյալներուն»:

Հոբելյանական հանդիսության առիթով բույր Եկեղեցու ներկայացուցիչներն ու հյուրերը առաջնորդվում են եկեղեցու ընդունելության դահլիճ, ուր տեղի է ունենում ջերմ մթնոլորտում, էկումենիկ ոգով զրույց: Ապա հյուրերը պատշաճ հյուրասիրությունից հետո հրաժեշտ են առնում ամենապատիվ Տ. Շնորհք սրբազան պատրիարքից և մեկնում լավագույն տպավորություններով և անկեղծ գոհունակությամբ: